ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14» օգոստոսի 2026թ. N ՄՈ/ 520-Ա

ք. Արմավիր

ԹԱՄԱՐԱ ՇԱՌՈՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ, 7-րդ և 9-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 20-րդ կետը և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի օգնական Թամարա Շառոյանի 2026 թվականի օգոստոսի 14-ի զեկուցագիրը՝

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի օգնական Թամարա Շառոյանին 2026 թվականի օգոստոսի 14-ին գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հանձնարարականը կատարելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Արայիկ Հակոբյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ՝ Ա. Համբարձումյան)՝ աշխատակցի փոխադրումն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
4. Փոխադրումն իրականացնել Nissan Tiida մակնիշի 638LL70 համարանիշի ավտոմեքենայով:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի օգնական Թամարա Շառոյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ